<<Յուքոմ>> ընկերությանը պատկանող գույքերի (մարտկոց, ալեհավաք, ռադիոմոդուլ, բաժանորդային և սերվեռային սարքեր, մալուխներ և այլ տեխնիկական միջոցներ) բաց դասական եղանակով աճուրդի մասին հայտարարություն

2026-11-27 17:08:30

Հայտատու	Փակ բաժնետիրական ընկերություններ
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենք 8-րդ հոդված

Հայտատու՝ <<Յուքոմ>> ՓԲԸ

Հիմք ընդունելով <<Հրապարակային սակարկությունների մասին 08.10.2003թ թիվ ՀՕ15Ն ՀՀ օրենքի>> 8-րդ հոդվածը, Յուքոմ ընկերությունը ծանուցում է, որ

2026թ դեկտեմբերի 11-ին կազմակերպիչ <<Յուքոմ>> ՓԲ ընկերության կողմից օնլայն տարբերակով կանցկացվի աճուրդ՝ դասական եղանակով: Բաց աճուրդի են ներկայացված <<Յուքոմ>> ընկերությանը պատկանող գույքերը:

Լոտ 1՝ (մարտկոց, ալեհավաք, ռադիոմոդուլ, բաժանորդային և սերվեռային սարքեր, մալուխներ և այլ տեխնիկական միջոցներ)
ժամը՝11:00 , մեկնարկային արժեք 15.000.000 ՀՀ դրամ,

Վաճառքի ներկայացված գույքը նախկինում շահագործվել է ընկերության կողմից և համարվում է օգտագործված: Գույքը օտարվում է <<ինչպես առկա է>> վիճակով: Գույքի տեղափոխումը իրականացվելու է գնորդի հաշվին՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընկերության կողմից չեն տրվում ապրանքի երաշխիքներ: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ապրանքի հետագա շահագործման ժամկետի համար,ինչպես նաև շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունների և (կամ) այլ խնդիրների համար: Ընկերությունը իրեն իրավունք է վերապահում մինչև աճուրդին նախորդող օրը փոփոխել հրապարակված ցուցակները:

Նախավճարը կազմում է `լոտի 5 տոկոսի չափով (750.000 ՀՀ դրամ), որը վճարվում է կազմակերպչին՝ աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ՝ բանկային փոխանցման միջոցով:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է նախավճարը կատարելուց հետո վճարման անդորագիրը և մասնակցի անձնագրի լուսապատճենը (լիազորագիրը) ուղարկել ներքոհիշյալ էլեկտրոնային հասցեին:

Հաղթող է ճանաչվում աճուրդի ընթացքում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Գույքի ուսումնասիրումը ՝ մինչև աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-16:00՝ք.Երևան, Րաֆֆու 111 հասցեում:

Աճուրդի կանոնակարգին պատճենը տրամադրվում է ներքոհիշյալ էլեկտրոնային հասցեին ուղարկված դիմումի հիման վրա:

Հաղթող մասնակիցը լոտում նշված սարքավորումներ կարող է տեղափոխել նույն՝ Րաֆֆու 111 հասցեից:

Օնլայն մասնակցության համար նախատեսված հղումը ինչպես նաև մասնակցի վկայականը (հերթական համարը) մասնակիցները կստանան էլեկտրոնային հասցեներին ուղարկված նամակի միջոցով՝ աճուրդի օրը:
Ցանկին կարող եք ծանոթանալ կից հղմամբ. https://www.ucom.am/procurement

Նախավճարի վճարման բանկային տվյալներն են՝
Բանկ՝ <<Արդշինբանկ >> ՓԲԸ,հ/հ 2470100859310010

Էլ. Փոստ՝ aristakes.dadyan@ucom.am

Հեռ..՝ +37498818859

37498818859

aristakes.dadyan@ucom.am

ՇԵՆԳԱՎԻԹ ՄԱՆԱՆԴՅԱՆ Փ. 33/8